



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

38

Հայ.

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ. Ա. Յ



Ա. ՇԽԱՏՄԱՆԻՐԱՑ


ՄԻՈՒԹԵԱՆ

ԲԱՐԻՁԻ



ԲԱՐԻՁԻ

Տաղավար Տիգրան Տիգրանի Տիգրան



1905

369 Աշխ. Մար.

4-21

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ա

Հ Ա Յ

ԱՇԽԱՏԱԿՈՒՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ԲԱՐԻԶԻ

Հիմնութ 8 Մայիս 1904

Ներկայացուած ձեռնիաս իշխանութեան 15 Սպրիլ 1905
իւ արձանագրուած 151553 քուահամարաւ .

SIÈGE SOCIA

Կեղրոնասուկի

96, Bd Picpus




ԲԱՐԻԶ

Տպագր. Տ. ՏՕՂԻՉՈՒՃԵԱՆ

1905

27 FEB 2014

44.362



ԿԱՆՈՆԱԳԻՐ


Հ. Յ.

Աշխատանքաց Միութեան

ԲԱՐԻՁԻ

ԳԼՈՒԽ Ա.

Կազմուրին եւ Նպատակ Միութեան



ՅՈՒ. 1. Բարիզի և Սէսի նահանգին Հայ աշխատանքաներու միջն կազմուած է ըսկերութիւն մը «ՀԱՅ ԱՇԽԱՏԱՆՔԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ ԲԱՐԻՁԻ» անունով :

ՅՈՒ. 2. Միութեան նպատակն է «Օգտակար քրող իւր անդամներուն բարոյագիս և նիւրագիս» :



7042-56

Բարոյապէս օգտակար լրացրւ համար՝

Ա. — Պիտի ջանայ յարաբերութեան դնել Բարիզի եւ Սէնի նահանգին ցրուած Հայ աշխատաւորները, կազմակերպելով հանդէմներ եւ լսարաններ, հաստատելով քիւալ մը եւ հրատարակելով ազդադիրներ (bulletin).

Բ. — Պիտի աշխատի օգուած քաղել տալ բոլոր այն բարոյական, կրթական եւ նկեթական առաւելութիւններէն որոնց կրնան հանդիպիլ Հայերը Բարիզի մէջ :

Գ. — Պիտի ընկերանայ բոլոր այն ջանքերուն, եւ նկատողութեան պիտի առնէ բոլոր այն իդձերն որոնք կրնան յանդիպիլ հայ ազդային ախանդութեան պահպանումին եւ բարձրացումին :

Դ. — Պիտի ջանայ իւր կարողութեան սահմանին մէջ աշխատութիւն դժնել իւր իսկական անդամներուն :

Ե. — Պիտի զբաղի Բարիզի եւ Սէնի նահանգին Հայ աշխատաւորներու բարի համբաւին պահպանումովը :

Նիւրապէս օգտակար լրացրւ համար՝

Զ. — Օգնութեան պիտի համնի իր կարօտ եւ հիւանդանդամներուն, վճարելով անոնց բժշկական ու դեղագործական ծախքերը :

Է. — Դրամական փոխատուութիւն պիտի ընէ իւր իսկական այն անդամներուն որոնք յանկարծական կարօտութեան մը մէջ ինկած են :

ԳԼՈՒԽ Բ.

Կազմակերպութիւն եւ պայմանն ընդունելուքեան

Յօդ. 3. Միութիւնը կը բաղկանայ իսկական եւ պատուոյ անդամներէ :

Յօդ. 4. Պատուոյ անդամներ են անոնք, որոնք իւրենց բաժնեգրութեամբ կամ համարժէք ծառայութեամբ կը նպաստեն Միութեան յաջողութեան, առանց մասնակցելու անոր նիւթեական առաւելութեանց :

Յօդ. 5. Իսկական անդամներ են անոնք որոնք իրաւունք ունին Միութեան աղանոված բոլոր առաւելութիւններուն, ի փոխարէն իրենց ամսական կանոնաւոր վճարումին :

Յօդ. 6. Իսկական անդամը ըլլալու համար պէտք է ըլլալ Հայ (Ֆրանսացի կամ ո եւ է ազգի հպատակ) :

Յօդ. 7. Իսկական անդամները կընդունուին Գործադիր ժողովոյ կողմանէ ձայներու մեծամասնութեամբ ասաժամանակաւոյ կերպով, անմիջապէս յետոյ գումարուելիք Ընդհ. ժողովին վաւերացուելու պայմանաւ Պատուոյ անդամները կընդունուին Գործ. ժողովոյ կողմանէ ձայներու մեծամասնութեամբ :

Յօդ. 8. Կրները եւ տղաքները կրնան մասնակցին Միութեան : Երիտասարդ անդամներ կրնան ներկայ գտնուիլ Ընդհանուր Ժողովներուն բայց 16 տարեկանէն վեր եղողները միայն կրնան մասնակցիլ քուէտարկութեան :

Յօդ. 9. Այն անդամները որոնք ճա բորդութեան մէջ կը գանուին, կրնան շարունակել իրենց անդամակցութիւնը իրենց բաժնեգրները կանոնաւորապէս վճարելով :

Յօդ. 10. Մեռած անդամներու տղաքը կրնան ժառանգել իրենց ծնողաց կողմանէ վճարուած բաժնեգրներուն բոլոր իրաւունքները եթէ իրենց ծնողաց մահուանէն մինչեւ 6 ամիս ուզեն արձանագրուիլ իրեւ իսկական անդամ Միութեան :

Յօդ. 11. Այն անդամները որոնք կը հրաժարին Միութեան, իրենց վճարած բաժնեգրները կը մնան Միութեան :

Յօդ. 12. Բարերար անդամ կը հոչակուին Գործադիր ժողովոյ կողմանէ անոնք որոնք 500 ֆրանքէ վեր նուէր մը կուտան Միութեան :

Գլուխ գ.

Վարչութիւն

Յօդ. 13. Միութիւնը կը կառավարուի Գործ. Ժողովով
մը որ կը բաղկանայ հինգ հոգիէ. Նախագահէ մը, Փոխ Նա-
խագահէ մը, Քարտուղարէ մը, Գանձապահէ մը եւ Խորհր-
դականէ մը: Բնդէ. Ժողովը այս թիւը Դի կրնայ բարձրացնել
Գանձապահին եւ Քարտուղարին օդնականներ կարենալ տալու
համար: Այս պաշտօնները ձրի են:

Յօդ. 14. Գործադիր Ժողովոյ անդամ ընտրուելու հա-
մար պէտք է լրացուցած ըլլալ 21 տարին եւ Միութեան
անդամակցած ըլլալ 6 տարիսէ ի վեր:

Յօդ. 15. Գործ. Ժողովոյ անդամները կընտրուին իսկա-
կան անդամներէ Ընդէ. Ժողովոյ մէջ զաղանի քուէով: Միշտ
վերընտրելի են: Նախագահը կընտրուի մասնաւոր քուէարկու-
թեամբ մը Ընդհանուր Ժողովին: Գործադիր Ժողովը ինքը
կընտրէ զիւանի միւս անդամները:

Յօդ. 16. Ոչ ոք կրնայ ընտրուիլ առաջին քուէարկու-
թեամբ եթէ չէ շահած քուէներու բացարձակ առաւելութիւն.
Երկրորդ անդամ համեմատական ընտրութիւնը կը կատարուի
յարաբերական մեծամասնութեամբ: Երբ երկու ընտրելիներ
հաւասար քուէ ստանան, տարիքով մեծը ընտրուած կը հա-
մարուի.

Յօդ. 17. Գործադիր Ժողովոյ թէ նախագահը եւ թէ
միւս անդամները կընտրուին մէկ տարուան համար:

Գործ. Ժողովը իրաւունք ունի առժամանակեայ կերպով
ընտրելու իր մեռած կամ հրաժարած անդամներուն տեղ նո-
րեր, որոնց ընտրութիւնը կենթարկուի անկից վերջ գումար-
ուելիք Ընդհանուր Ժողովոյ վաւերացման:

Այս կերպով ընտրուած խորհրդականները իրենց նախորդ-
ներուն պաշտօնավարութեան ըթանը կաւարտեն միայն:

Յօդ. 18. Գործադիր Ժողովոյ նախագահը եւ անդամ-
ներուն առնուազն կէսը կընտրուին վիայն արևեստաւորներէ:

Յօդ. 19. Նախագահը կապահովէ Միութեան օրինաւոր
կառավարութիւնը՝ կանոնագրին համաձայն:

Ամէն տարւան առաջին երեք ամիսներուն մէջ կը ներ-
կայացնէ Ռատիկաննապետին (Préfet de Police).

Ա. Միութեան դրամական վիճակը. իւր հիւանդ ան-
գամմերուն թիւը եւ հիւանդութեանց տեսակները:

Բ. Գործադիր Ժողովոյ կողմանէ Ընդհանուր Ժողովոյ
ներկայացուած Միութեան բարոյական եւ դրամական վիճա-
կին համարատուութիւնը.

Պաշտօն ունի հսկել ժողովներուն կանոնաւորութեան,
կսորագրէ բոլոր թուղթերը եւ որոշումները. կը ներկա-
յացունէ Միութիւնը արդարութեան եւ քաղաքային կինաց
բոլոր գործերուն մէջ:

Յօդ. 20. Փոխ Նախագահը կօգնէ նախագահին անոր
բոլոր պաշտօնավարութեան միջոցին եւ կը փոխանորդէ անոր
բացակայութեան կամ գործերով զբաղած ատեն:

Յօդ. 21. Քարտուղարին է հրամակադիրները
պատրաստել. նամակները եւ ատենագրութիւնները խմբագ-
րել. դիւնախթողթերը պահել եւ Գործ. Ժողովին ներկայա-
ցնել անդամակցութեան խնդրանքները: Բաց տեղերուն եւ
գործի խնդրանք ընողներուն տեսրակը կը բռնէ:

Յօդ. 22. Գանձապահին պաշտօն է գանձումները եւ
վճարումները ընել, հաշուակալութեան տեսրակները բռնել.
պատասխանատու է ՍՆՏՈՒԿին. կը վճարէ Նախագահէն ստո-
րագրուած արտօնագրին վրայ, որոշմամբ Գործ. Ժողովոյ:

Յօդ. 23. Գործ. Ժողովը կը գումարուի ամէն անդամ որ կը հրաւիրուի Նախագահէն և առնուազն ամիսն անդամ մը:

Գումարումը անհրաժեշտ է եթէ կը պահանջուի Գործ. Ժողովոյ անդամներուն մեծամասնութիւնէն: Գործ. Ժողովոյ որոշումները եւ խորհրդակցութիւնը այն ատեն օրինաւոր են միայն, եթք Ժողովը կազմող անդամներուն մեծամասնութիւնը ներկայ է նստին:

Յօդ. 24. Միութեան Ընդհանուր Ժողովը տարին երկու անդամ սովորական նստի կը հրաւիրուի լսելու համար իրեն ներկայացուած տեղեկագրերուն ընթերցումը, եւ որոշում տալու համար այն խնդիրներու մասին որ իրեն կը ներկայացուի Գործադիր Ժողովոյ կողմանէ:

Ընդհանուր Ժողովին գումարումը անհրաժեշտ է երբ քուէի իրաւունք ունեցող Միութեան անդամներուն մէկ չորսպէն կամ Գործադիր Ժողովոյ անդամներուն մեծամասնութեան կողմանէ կը պահանջուի:

Յօդ. 25. Ընդհ. Ժողովը որ կը խորհրդակցի վարը նշանակուած պարագայէն գուրս խնդիրներու վրայ, պէտք է բաղկանաց Միութեան անդամներուն գոնէ 1/4էն: Եթէ ներկաներուն թիւը 1/4էն պակաս ըլլայ, Ժողովը կը յետաձգուի եւ առ առաւելն մինչեւ մէկ ամիս կրկն կը հրաւիրուի եւ այս անդամ Ժողովը օրինաւոր կը համարուի ներկաներուն թիւը քանիի ալ հասնի եւ որոշումները կը արուին ձայներու մեծամասնութեամբ:

Յօդ. 26. Արտաքոյ կարգի Ընդհանուր Ժողովը որ կը խորհրդակցի կանոնագրը բարեփոխելու համար, պէտք է բաղկացած ըլլայ առնուազն Միութեան իսկական անդամներուն 1/4էն, որոշումները կը արուին ձայներու երկու երրորդին մեծամասնութեամբ:

Այս արտաքոյ կարգի Ընդհ. Ժողովը որ կը խորհրդակցի Միութեան կամաւոր լուծման վրայ, կրնայ օրինաւորապէս գումարուիլ եթէ քուէի իրաւունք ունեցող անդամներուն մեծամասնութիւնը ներկայ է, եւ որոշումները կը արուին ներկայ անդամներուն 2/3 ձայներու մեծամասնութեամբ:

Յօդ. 27. Թէ Ընդ. Ժողովի եւ թէ Գործ. Ժողովի մէջ չի կրնար արուիլ որոշում այն խնդիրներուն վրայ որոնք Օրակարգի մէջ չեն անցած եւ կամ մասնաւոր առարկայ չեն եղած հրաւէրի:

Յօդ. 28. Թէ Ընդհանուր եւ թէ Գործադիր Ժողովին մէջ արգիլուած է վիճաբանիլ Միութեան նպատակէն դուրս քաղաքական եւ կամ կրօնական հարցերու վրայ:

Գլուխ Դ.

Գանձալին կազմակերպութիւն

Յօդ. 29. Միութեան հասոյթները երկու տեսակ են. սովորական հասոյթներ եւ արտաքոյ կարգի հասոյթներ:

Սովորական հասոյթներն են,

Ա. Իսկական անդամներուն ամսավճարները.

Բ. Այս վճարումներէն յառաջ եկած շահերը:

Արտաքոյ կարգի հասոյթներն են:

Ա. Պատուոյ անդամներուն ամսավճարները.

Բ. Նուէրները եւ կտակները որոնց ընդունելութիւնը արտօնուած է ձեռնհաս իշխանութեամբ.

Գ. Տուգանքի հասոյթը.

Դ. Հանդէմներու , Խասրաններու և Թօմզօլաններու հասոյթները .

Ե. Այս վերոյիշեալ արտաքոյ կարգի հասոյթներէն դուցած շահը :

ՑՕԴ. 30. Միութիւնը ներկայ կանոնագրի երկրորդ յօդուածին Ա. և Բ. հատուտներուն գործադրութեան սկսելու համար 1000 ֆրանք պատրաստելէ յետոյ , հաշուները պիտի բաժնէ երկու մասի . Հասարակ հաշուեմաս (fond ordinaire) և Արտաքոյ կարգի հաշուեմաս (fond extraordinaire) .

ՑՕԴ. 31. Հասարակ հաշուեմասին յատկացուած են իսկական անդամներու բաժնեգիններուն 1/4 ը . պատուոյ անդամներուն բաժնեգինները , նուերներն ու կտակները , հանդէմներու եւն . հասոյթները եւ արտաքոյ կարգի հաշուեմասի պիմեթղթերէն շահուած պարգևն 5 0/0 ը :

ՑՕԴ. 32. Արտաքոյ կարգի հաշուեմասի յատկացուած են՝ իսկական անդամներու բաժնեգիններուն 3/4 ը անոնց շահը և արտաքոյ կարգի հաշուեմասի արժեթղթերէն շահած պարգևն 5 0/0 ը :

Իսկական անդամներու ամսավճարներուն 3/4 ը ամրողջութին յատկացուած է ձեռնհաս կառավարութենէն վաւերացուած պարգեւաւոր արժեթղթեր գնելու :

ՑՕԴ. 33. Եթէ այս արտաքոյ կարգի հաշուեմասին արժեթղթերէն մին պարզեւ մը շահի . անմիջապէս պիտի բաժների իսկական անդամներուն , անոնց տուած ամսական վճարումներուն համեմատութեամբ , 10 0/0 ը զեղչելէ յետոյ , որուն կէսը պիտի աւելցուի հասարակ հաշուեմասին եւ կէսն ալ արտաքոյ կարգի հաշուեմասին վրայ :

Հրաժարած , արտաքսուած եւ մեռած ու չչարունակած

անդամներուն բաժինները պիտի աւելցուին հասարակ հաշուեմասին վրայ :

ՑՕԴ. 34. Ո եւ է գանձային գործողութիւն չփ կրնար կատարուիլ առանց նախադահին , Քարտուղարին և Գանձապահին սաորագրութեան .

ՑՕԴ. 35. Ընդհանուր ժողովը կընտրէ ամէն տարի երեք հոգիէ բաղկացած մասնաժողով մը , որ պաշտօն պիտի ունենայ քննելու Գործ . Ժողովին հաշխները :

ՑՕԴ. 36. Գանձապահը չփ կրնար 250 ֆրանքէ վեր գումար պահել մասուկին մէջ :

ՑՕԴ. 37. Արժեթղթերը , որոց ընտրութիւնը Գործադիր ժողովը կընէ , պէտք է պահ տրուին Caisse des Dépôts et Consignationsը :

ԳԼՈՒԽ Ե.

Պարտականութիւնն դէպ ի Միութիւնը

ՑՕԴ. 38. Իսկական անդամները Միութեան կանդամակցին վճարելով ամսական մէկ ֆրանք բաժնեգին :

ՑՕԴ. 39. Պատուոյ անդամները կը վճարեն տարեկան առնուագն 20 ֆրանքի գումար մը :

ՑՕԴ. 40. Ամէն իսկական անդամ սրաբառոր է , եթէ կարեւոր պատճառ մը չունի , ներկայ գտնուիլ Ծնդհ . Ժողովի նիստերուն : Ոչ ոք իրաւունք ունի իրեն փոխանորդ կարգել Գործադիր ժողովին եւ կամ Ծնդհանուր ժողովին մէջ :

ՑՕԴ. 41. Իսկական անդամները Միութենէն կազմակերպուած հանդէմներու եւն . մուտքի գնին կէսը կը վճարեն :

ՑՕԴ. 42. Ամէն իսկական անդամ պարտաւորութիւն

ունի իմացնել Քարտուղարին Հթէ գործի համար ո եւ է բաց
տեղի մասին տեղեկութիւն ունի :

ԳԼՈՒԽ Զ.

Պարտականութիւնն Միութեան

Փոխառուուրիւն եւ օգնուրիւն հիւանդութեան պարագային

Յօդ. 43. Միութիւնը պարտաւոր է օգնել իր հիւանդ
անդամներուն հետեւեալ կերպով :

Ա. — Այն անդամը որ կ'ուզէ խնամուիլ իր տունը, պիտի
ընդունի բժշկական խնամք եւ գեղագործական ծախքերը,
միեւնոյն տարուան մէջ առաջին անդամ մէկ ամիս, իսկ երկ-
րորդ անդամ 15 օր :

Բ. — Այն անդամը որ հիւանդանոցի մէջ կը խնամուի,
պիտի ընդունի միեւնոյն տարուան մէջ առաջին անդամ 30
ֆր. իսկ երկրորդ անդամ 15 ֆր. հիւանդանոցէն մեկնած տաեն:

Յօդ. 44. Բժշկին պատուերներուն հակառակող հիւանդը
կը դադրի խնամք ընդունելէ :

Յօդ. 45. Այն անդամը որ երեք ամիսէ ի վեր իր բաժ-
նեգինը չէ վճարած, իրաւունք կ'ունենայ կանոնական օդ-
նութեան իր պարտքերը վճարելէ 15 օր վերջը :

Յօդ. 46. Միութիւնը փոխ կուտայ 30 ֆրանքի գումար
մը իր այն անդամներուն որոնք ո եւ է կարօտութեան մէջ
կը գտնուին : Որպէս զի այս փոխատուութիւնը կարենայ
նորոգուիլ, պէտք է որ փոխառուն արդէն վճարած ըլլայ իր
պարտքը : Գործազիր Ժողովը կ'որոշէ հատուցման եղանակը
փոխառուին հետ համաձայնութեամբ :

Յօդ. 47. Փոխատուութեան քանակութիւնը կրնայ բար-

ձրանալ ապագային Ընդհ. Ժողովոյ կողմանէ, Գործ. Ժողովոյ
կարծիքը առնելի վերջ, որուելով ամէն երկու տարին մի
անդամ փոխատուութեան բարձրագոյն քանակութիւնը :

Յօդ. 48. Խոկական անդամները իրաւունք կ'ունենան
օգնութեան՝ հիւանդութեան պարագային, եւ փոխառութեան՝
Միութեանս անդամակցելէն վեց ամիս վերջը միայն :

Յօդ. 49. Գործ. Ժողովը պարտաւոր է, իր կարողու-
թեան սահմանին մէջ գործ եւ աշխատութիւն ճարել իր այն
անդամին որ անգործ վիճակի մէջ կը գտնուի :

Յօդ. 50. Զախորդութեան մատնուած պատուոյ ան-
դամները կրնան խոկական անդամ զրուիլ Գործազիր Ժողովոյ
մատնաւոր որոշմամբ :

Յօդ. 51. Բժշկական եւ գեղագործական գործողութիւն-
ները կը կարգադրուին Գործազիր Ժողովոյ կողմանէ, որ կը
նշանակէ բժշկները եւ զեղագործները :

Դիղագործը գեղերը կրնայ տալ միայն հիւանդ անդամին
անունը կըող բժշկի տուած զեղագրի ներկայացման վրայ :

Բժիշկները պարտին կարելի եղածին չտի խոյս տալ ար-
տօնագրելէ պատրաստի եւ վայելքի գեղեր, երբ ասոնք կըր-
նան փոխարինուիլ ուրիշ միեւնոյն ազգեցութիւններով ունեցող
եւ աւելի աժան պատրաստութիւններով :

Յօդ. 52. Վիրաբուժական մեծ գործողութիւնները Մի-
ութեան կողմանէ յատկացուած բժշկական եւ գեղագործա-
կան խնամքներէ գուրս կը մնան :

ԳԼՈՒԽ Ե.

Կարգապահութիւն

Յօդ. 53. Նխտերու կարգապահութեան համար Գործ.

Ժողովը կը պատրաստէ Ներքին կանոնագիր մը : Ու եւ է պատիժ չի կրնար որոշել կանոնագրիս մէջ նշանակուածնեւրէն գուրս :

Յօ՞ր. 54. Այն անդամը որ Գործ. Ժողովի կողմանէ իրեն յանձնուած պաշտօնը չի կատարէր առանց օրինաւոր պատճառի , կը դատապարտուի 2 ֆրանք տուգանքի :

Այն ամէն անդամ , որ Միութեան վեասաբեր եւ կամաւ անձիշդ յայտաշարութիւններ կընէ , եւ կամ ուրիշ անդամներու սուտ յայտաբարութիւնները եւ խարդաւանքները դիտութեամբ կը հաստատէ՝ 4 ֆր. տուգանքի կը դատապարտուի :

Այն ամէն իսկական անդամը որ չի ներկայանար Ընդհ. Ժողովի գումարումներուն , չունենալով բանաւոր պատճառ մը , Գործ. Ժողովի կողմանէ կը դատապարտուի 50 սանթիմ տուգանքի :

Այն ամէն անդամ որ կը խանդաբէ Ժողովոյ նիստերը կամ գինով վիճակի մէջ կը ներկայանայ , կը դատապարտուի 1 ֆրանք տուգանքի եւ կը հրավիրուի մեկնիլ Ժողովէն :

Այն ամէն անդամ որ Գործ. Ժողովոյ անդամներուն կամ բժշկին դէմ նախատական խօսքեր կ'արտասանէ կը դատապարտուի 3 ֆրանք տուգանքի : Կրկնութեան պարագային կրնայ Միութեան արտաքսուիլ Ընդհանուր Ժողովոյ կողմանէ , Գործադիր Ժողովոյ կարծիքն առնելէ յետոյ :

Ամէն անդամ որ գումարումի մը մէջ քաղաքական կամ կրօնական խողիք մը կը յարուցանէ , միմիայն այս պատճառին համար կը դատապարտուի 2 ֆրանք տուգանքի : Գործ. Ժողովոյ անդամներուն համար 3 ֆրանք է այս տուգանքը , Կրկնութեան պարագային կրնայ Միութեան արտաքսուիլ :

Տուգանքները կը պահանջուին բաժնեգիններէն առաջ : Այն անդամը որ չի վճարէր այն տուգանքը որուն դատապարտուած է կրնայ արտաքսուիլ Միութեան :

Դիմույթ լ.

Հրաժարում եւ Արտախում

Յօ՞ր. 55. Միութեան անդամակցութեանէն կը դադրին այս անդամները որոնք չեն վճարէր իրենց բաժնեգինները վեց ամիսէ ի վեր :

Սակայն այս յօդուածը կրնայ չի գործադրուիլ Գործ. Ժողովոյ կողմանէ այն անդամներուն համար որոնք կ'ապացուցաննեն թէ իրենց կամքն անկախ պատճառներ արդեւք եղած են իրենց բաժնեգիններ կանոնաւոր վճարման :

Յօ՞ր. 56. Արտաքսումը կ'արտասանուի Ընդհանուր Ժողովոյ մէջ Գործադիր Ժողովոյ առաջարկութեան վրայ եւ առանց վիճաբանութեան :

Ա. — Այն անդամներուն դէմ որոնք անուանարկիչ դատապարտութիւն մը կրած են ,

Բ. — Այն անդամներուն դէմ որոնք պատուոյ հակառակ գործի մը մէջ յանցաւոր գտնուած են , կամ յայտնի կերպով գայթակղալից ընթացք մը ունին :

Գ. — Սնոնց դէմ որոնք կամաւոր եւ օրինաւորապէս հաստատուած վեաս մը կը պատճառնեն Միութեան շահերուն:

Այն իսկական անդամը որուն արտաքսումը կ'առաջարկուի , կը հրաւիրուի ներկայանալ Գործ. Ժողովին , լսելու համար զինքը իրեն վերագրուած դորձերուն վրայ . Երբ նշանակուած օրը չներկայանայ , նոր հրաւէր մը եւս կ'ուղղուի պահովագրուած նամակով , եթէ կրկին չներկայայ , իր արտաքսումը կ'արտասանուի Ընդհանուր Ժողովէն , առանց ուրիշ ո եւ է ձեւակերպութեան :

Յօ՞ր. 57. Հրաժարում եւ արտաքսում իրաւունք չեն տար ո եւ է զրամական հատուցումի :

ԴԼՈՒԽ թ.

Բարեփոխում կանոնագրի, Լուծում եւ Հաջուելարդարութիւն

ՅՕԴ. 58. Կանոնագիրը կրնայ բարեփոխութիւն Գործադիր Ժողովոյ կամ իսկական անդամներուն առնուազն մէկ հինգերորդին առաջարկութեան վրայ :

Այս վերջին պարագային առաջարկութիւնը կը ներկայացուի Գործադիր Ժողովոյ երկու ամիս առաջ այն նիստէն որուն նկատառման պիտի յանձնուի խնդիրը :

Բարեփոխման ծրագիրը կը տպագրուի եւ կը խրկուի բոլոր իսկական անդամներուն Բնդհ. Ժողովոյ գումարումէն առնուազն 8 օր |առաջ, մասնաւոր նամակներով ուր նշանակուած ըլլայ Օրակարգը:

ՅՕԴ. 59. Կանոնագրին բարեփոխութիւնները կը գործադրուին ձեռնհաս իշխանութենէն վաւերացուելէն յետոյ :

ՅՕԴ. 60. Միութեան լուծման պարագային իւր բոլոր գոյքերը կը զրուին կ. Պոլսոյ Գում-Գարուի Հայոց Պատրիարքին արամագրութեան տակ, գործածուելու համար հայ ազգային արհեստագիտական հաստատութեան մը համար :



«Ազգային գրադարան»



NL0229069

44.362